

ԲԱՆԿ-ՀԱՃԱԽՈՐԴ ՀԱՄԱԿԱՐԳԻ



ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան – 2008



1. Համակարգի նպատակը

LSBank-Client համակարգը նախատեսված է հաճախորդների հաշվեհամարները ինտերնետի միջոցով OnLine ռեժիմով կառավարելու համար: Համակարգը առաջարկում է ինտերնետի միջոցով պաշտպանված մուտք բանկի ֆինանսական և տեղեկատվական ինֆորմացիային: Համակարգը թույլ է տալիս՝

1. Աշխատանք վճարային փաստաթղթերով
 2. Վճարային փաստաթղթերի առաքում ինտերնետի միջոցով
 3. Քաղվածքների ստացում ըստ հաշիվների՝ ցանկացած ժամանակահատվածի համար:
- Համակարգի հաճախորդների համար վերանում է գործողությունը կատարելու համար բանկ այցելելու անհրաժեշտությունը:

2. Համակարգի անվտանգության համար կատարվող պահանջներ

Համակարգը հնարավորություն է տալիս կառավարել հաճախորդների հաշվեհամարները ինտերնետի միջոցով: Այստեղ կարևոր խնդիրներից մեկը ինֆորմացիայի անվտանգության ապահովումն է: Համակարգը առաջարկում է օգտագործել պաշտպանված համագործակցության ստանդարտ արձանագրություն (SSL): Այս արձանագրությունը թույլ է տալիս ավտոմատ կերպով ծածկագրել ողջ փոխանցվող ինֆորմացիան: Կիրառվում է Էլեկտրոնային ստորագրության մեխանիզմը: Էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծումը հնարավոր է գաղտնի բանալու միջոցով, որը գտնվում է հաճախորդի մոտ: Գ-ա անցնում է երկու փուլով՝

1. Ծածկանվան և ծածկագրի ստուգում
2. Գաղտնի բանալու ստուգում

Նշանաբառերը, բանալիները , ինչպես նաև մուտքի իրավունքները տեղադրվում են բանկում: Հաճախորդի բոլոր գործողությունները նշվում և գրի են առնվում գլխավոր համակարգում: Հաճախորդի կողմից պատրաստված վճարման փաստաթուղթը անցնում է երկկողմանի վերահսկողություն (վերահսկողություն հաճախորդի կողմից և վերահսկողություն բանկում):

3. Խորհուրդներ հաճախորդներին

1. Նշանաբառը պահեք գաղտնի ,
2. Սկավառակները բանալիների հետ պահեք անհասանելի տեղում,
3. Այլ էջ մտնելուց առաջ փակեք Browser-ի պատուհանը,
4. Եթե նույն համակարգչով աշխատում են այլ աշխատակիցներ, անհրաժեշտ է հետևել, որ չառաջանա web-էջը պատճենելու հնարավորություն,



5. Բաց մի թողեք Browser-ի պատուհանը առանց անհրաժեշտության :

4. Օգտագործողի գրանցումը

Գրանցումից հետո (տես նկ.1) բացվում է Համակարգի գլխավոր մենյուն(տես նկ.2): Այստեղ երևում են Կենտրոնական Բանկի փոխարժեքները, USD, EUR, RUR, GBP տարադրամների առքի և վաճառքի փոխարժեքները: Այս տեղեկությունները պահպանվում են պատուհանում ցանկացած գործարքի կատարման ժամանակ(տես նկ.3): Այլ տարադրամների փոխարժեքը դիտելու համար կարելի է օգտվել «Տեղեկատու» բաժնից:

Enter your login name and password


Login

Password

Key

Նկ.1

5. Համակարգի գլխավոր մենյու




Նկ.2

Փոխարժեք		
Արժույթ	Առք	Վաճառք
USD	560.00	550.00
RUR	18.70	0.00
EUR	0.00	0.00
GBP	0.00	0.00

Նկ.3

Հետագա աշխատանքի համար օգտագործողը ընտրում է իրեն անհրաժեշտ կետը:

	IN 75-10-01	Էջ 5 / 9
	«Բանկ-հաճախորդ» համակարգի օգտագործման ուղեցույց	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: 23.06.2008թ.


Հաճախորդ – Այստեղ կարելի է տեսնել տեղեկատվական ինֆորմացիա հաճախորդի մասին


Հաշիվներ – Հաճախորդի հաշիվներն են՝ ըստ արժույթների, նրանց բացման օրերը

Կադասյար – Այս էջից կարելի է հեռացնել Ձեր կողմից պահպանված հանձնարարականների տեսակը կամ տեսակները: Դրա համար անհրաժեշտ է տվյալ տեսակի (տեսակների) դիմաց կատարել նշում (V), ապա սեղմել **✖ Հեռացնել նշված կադասյարը(ները)** նշապատկերը:


Արժույթի փոխարժեք – ԿԲ կողմից հաստատված արժույթի փոխարժեքներն են:

Գործարքներ – Փաստաթղթերի կազման ժամանակ * նշված դաշտերը ենթակա են պարտադիր լրացման:



Կազմված հանձնարարագրերի տեսքը հնարավոր է պահպանել (հետագայում նման կամ որոշ դաշտերի փոփոխումով հանձնարարագիր ուղարկելու համար): Դրա համար անհրաժեշտ է վճարման հանձնարարագրի վերջին տողում լրացնել Ձեր կողմից հանձնարարագրին տրված անվանումը (այն կարող է ունենալ թվային կամ տառային տեսք) ,ապա սեղմել  (Save template) նշապատկերը, էկրանին կհայտնվի **Ձեր կադասյարը հաջող** պահպանվեց արտահայտությունը:

Իսկ պահպանվածներից որևէ մեկը ընտրելու համար անհրաժեշտ է ընտրել հանձնարարականին տրված անվանումը և սեղմել  (Load template) նշապատկերը, արդյունքում էկրանին կհայտնվի անհրաժեշտ վճարման հանձնարարագրի տեսքը, որը ենթակա է փոփոխման և ուղարկման:


6. Գործարքներ



Նկ.4

Վճարման հանձնարարագիր –բոլոր անհրաժեշտ տվյալները լրացնելուց հետո ,անհրաժեշտ է գործիքների վահանակից սեղմել  (save) նշապատկերը, եթե այն ակտիվ է:Եթե փաստաթղթի բոլոր դաշտերը ճիշտ են լրացված,ապա էկրանին կհայտնվի **Ձեր հարցումը ավարտվեց** բարեհաջող արտահայտությունը ,հակառակ դեպքում Ձեր էկրանին կհայտնվի հաղորդագրություն ծրագրի կողմից հայտնաբերված սխալի մասին:Սխալի ուղղումը պետք է կատարել նույն հաղորդագրության մեջ և կրկին սեղմել  (save) նշապատկերը:

Վճարման հանձնարարագիր
Ամսաթիվ 04/03/05

Նոր 

Ուղարկող

Վճարողի հաշիվ * AMD

Վճարողի բանկ **AM24 100-Յունիբանկ, 24 100**

Վճարող **Նիկողոսյան**

Ստացող


Գումար *

Ստացող բանկ *

Հաշիվ *

Անուն

Վճարման նպատակը *



Նկ.5

Վճարման հանձնարարագիր(արժույթ) - Կատարվում է նույն կերպ,ինչ որ Վճարման հանձնարարագիրն է Արժույթի առքի դիմում,Արժույթի վաճառքի դիմում և Անցումնագործարք հանձնարարկանները նախատեսված են արժույթների փոխարկման գործառնությունների համար:

7. Հսկում

Հսկում - Այս էջում կարելի է տեսնել ցանկացած որոշակի ժամանակահատվածում կատարված բոլոր գործարքները՝հաստատված և չհաստատված:Գրա համար անհրաժեշտ է Ամսաթիվ սկսած և մինչև տողերում ընտրել ամսաթվերը և սեղմել **Գիտում**,ինչպես նաև կարելի է Էկրանին թողնել միայն այն գործարքները, որոնք պետք է անցնեն առաջին և երկրորդ հսկումները, միայն հաստատվածները կամ բոլորը: Էկրանին հայտնված գործարքների տողերից որևէ մեկի փոխանցումները տեսնելու համար բավական է **համար-ից** ձախ գտնվող շրջանակի մեջ նշում կատարել:Առաջին հսկում անցնող գործարքները հաստատելու համար՝ անհրաժեշտ է մեկ անգամ ևս ներմուծել կրեդիտի հաշիվը և գումարը, ապա սեղմել **հաստատել** : Իսկ որևէ գործարք հեռացնելու համար անհրաժեշտ է այն ընտրելուց հետո սեղմել **հեռացնել**: Երկրորդ հսկում անցնող գործարքները հաստատելու համար պետք է ընտրել այն և սեղմել հաստատել:

Հսկում

Ամսաթիվ սկս.

մինչև

Դիտել

Հսկում[2] [Բոլորը][Հաստատված]

Համար	Վճարողի հաշիվ	Ստացողի Բանկը	Ամսաթիվ	Ներմուծել
<input checked="" type="radio"/> 284	24 100 1128529	AM10300	29/0 1/05	FL
<input type="radio"/> 290	24 100 1128529	AM10300	29/0 1/05	FL

Վճարողի հաշիվ

Ստացող բանկ

Կրեդիտ հաշիվ *

Գումար *


Վճարման նպատակը

Համար

[Հաստատել]

Նկ.6

8. Հաշվետվություններ

Մնացորդ – Որևէ հաշվի մնացորդը տեսնելու համար բացված էկրանում, **Հաշիվ** դաշտում պետք է ընտրել անհրաժեշտ հաշիվը, ապա **Ամսաթիվ** դաշտում նշել անհրաժեշտ ամսաթիվը (ձեռքով կամ ընտրվում է  նշապատկերի օգնությամբ), ապա սեղմել **Դիտել** :


Մնացորդ


Հաշիվ *

Ամսաթիվ

Դիտել

Նկ.7

	IN 75-10-01	Էջ 8 / 9
	«Բանկ-հաճախորդ» համակարգի օգտագործման ուղեցույց	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: 23.06.2008թ.

Տեղեկանք – Նախատեսված է որևէ հաշվի հետ ընտրված ժամանակահատվածում կատարված գործարքները տեսնելու համար: Բացված էկրանում, **Հաշիվ** դաշտում պետք է ընտրել անհրաժեշտ հաշիվը, ընտրել գործարքների տիպը (դեբետ, կրեդիտ կամ բոլորը), ապա Ամսաթիվ սկսած և մինչև տողերում ընտրել ամսաթվերը (լրացվում է ձեռքով կամ ընտրվում է  նշապատկերի օգնությամբ) և սեղմել **Դիտել**:




Նկ.8

Քաղվածք – Ստացվում է համանմանորեն, ինչպես Տեղեկանքը:


9. Հաղորդագրություններ


Նոր հաղորդագրություն – Բացված դաշտում տեքստը հավաքելուց հետո սեղմել **Ուղարկել**, որից հետո էկրանին կհայտնվի **Հաղորդագրությունը ուղարկվեց** արտահայտությունը:



Նկ.9

Ստացված հաղորդագրություններ – Ստացված հաղորդագրությունները տեսնելու համար **Ամսաթիվ**


	IN 75-10-01	Էջ 9 / 9
	«Բանկ-հաճախորդ» համակարգի օգտագործման ուղեցույց	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: 23.06.2008թ.

դաշտում նշել անհրաժեշտ ամսաթիվը(ձեռքով կամ ընտրվում է  նշապատկերի օգնությամբ), ապա սեղմել **Դիտել**:

Ստացված հաղորդագրություններ
 Ամսաթիվ 04/03/05

Ամսաթիվ

Դիտել


29/01/05 

No.39 22/02/05

ikhjkjh

khjbkjh


Նկ.10

Ուղարկված – Ուղարկված հաղորդագրությունները տեսնելու համար **Ամսաթիվ** դաշտում նշել անհրաժեշտ ամսաթիվը(ձեռով կամ ընտրվում է  նշապատկերի օգնությամբ), ապա սեղմել **Դիտել**:

Ստացված հաղորդագրություններ
 Ամսաթիվ 04/03/05

Ամսաթիվ

Դիտել

29/01/05 

No.39 22/02/05

ikhjkjh

khjbkjh

Նկ.11